ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված ժամկետներում ունեն շահութահարկի, եկամտահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, հաստատագրված վճարների, առևտրի հարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների), տարեկան պետական տուրքի ու բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով ապառքներ, տույժեր և (կամ) տուգանքներ, ինչպես նաև հարկային օրենսդրությունը խախտելու համար սահմանված տուգանքներ (բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար սահմանված տուգանքների), «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների պահանջների խախտման համար սահմանված տուգանքներ (այսուհետ՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն):

2. Սույն օրենքը տարածվում է նաև հարկ վճարողների այն հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների վրա, որոնց մասով առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Հոդված 2.

1. Այն հարկ վճարողները, որոնք 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեն հաշվարկված ու չվճարված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ (այդ թվում՝ ստուգման ակտերով), ապառքներն ամբողջությամբ ու դրանց նկատմամբ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը հաշվարկված և չվճարված տույժերի 10 տոկոսը սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ժամանակացույցով և կարգով մարելու դեպքում ազատվում են հաշվարկված և չվճարված (այդ թվում՝ ստուգման ակտերով) տույժերի 90 տոկոսից և տուգանքներից, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածով նախատեսված կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելու պարտականությունից:

2. Այն հարկ վճարողները, որոնք 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը ունեն հաշվարկված ու չվճարված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ (այդ թվում՝ ստուգման ակտերով), ապառքներն ու տուգանքներն ամբողջությամբ ու դրանց նկատմամբ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը հաշվարկված և չվճարված տույժերի 10 տոկոսը սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ժամանակացույցով և կարգով մարելու դեպքում ազատվում են հաշվարկված և չվճարված (այդ թվում՝ ստուգման ակտերով) տույժերի 90 տոկոսից, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածով նախատեսված կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելու պարտականությունից:

3. Այն հարկ վճարողները, որոնք մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը հարկային մարմիններ կներկայացնեն մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկ-հաշվետվություններ (այդ թվում՝ ճշտված), և սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ժամանակացույցով ու կարգով կմարեն դրանց հետևանքով առաջացող ապառքներն ամբողջությամբ և մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը հաշվարկված տույժերի 10 տոկոսը, կազատվեն հաշվարկ-հաշվետվությունների (այդ թվում՝ ճշտված) ներկայացման արդյունքում հաշվարկվող տույժերի 90 տոկոսից և տուգանքներից:

Սույն մասին համապատասխան հաշվարկ-հաշվետվություններ (այդ թվում՝ ճշտված) չեն կարող ներկայացվել հարկային մարմինների կողմից հարկ վճարողների (հարկային գործակալների) մոտ ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջանների համար:

4. Սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածում նշված՝ 2010 թվականի դեկտեմբերի 31-ից հետո փաստացի գործունեություն չիրականացրած հարկ վճարողներն ազատվում են 2010 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած (այդ թվում՝ ստուգման ակտերով) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքները, հաշվարկված և չվճարված տույժերն ու տուգանքները, գործունեության չիրականացման ժամանակահատվածում հաշվարկված և չվճարված շահութահարկի ու եկամտահարկի կանխավճարները (այդ թվում՝ նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարները) և հաստատագրված վճարները վճարելու պարտավորությունից, այդ թվում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով բռնագանձման ենթակա հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններից, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածով նախատեսված կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելու պարտականությունից: Սույն մասը չի տարածվում նախաքննության մարմնում չավարտված քրեական գործերով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ ունեցող հարկ վճարողների վրա:

Հոդված 3.

1. Հարկային մարմինը մինչև 2018 թվականի նոյեմբերի 20-ը սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ ունեցող հարկ վճարողներին փոստային կապի ծառայության (հետադարձ ծանուցմամբ) կամ անհատական հանձնման միջոցով տրամադրում է ծանուցում՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մարման ժամանակացույց կնքելու և սույն օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորության մասին:

2. Ծանուցումն ուղարկվում է կազմակերպության գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրի կամ հարկային մարմնին հայտնի՝ կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) այլ հասցեով:

3. Ծանուցումը համարվում է պատշաճ, եթե այն ստորագրությամբ հանձնվել է կազմակերպության ներկայացուցչին կամ ֆիզիկական անձին (անհատ ձեռնարկատիրոջը) կամ վերջինիս ներկայացուցչին:

Հոդված 4.

1. Հարկ վճարողները կարող են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը դիմել իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ սույն օրենքին համապատասխան հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մարման ժամանակացույցի հաստատման համար:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ ձևով չծանուցված հարկ վճարողի պատասխանատու պաշտոնատար անձինք (տնօրեն, կառավարիչ և այլն) կարող են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին դիմել մինչև սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամանակացույցի մարման վերջնաժամկետը:

Հոդված 5.

1. Հարկային մարմինը տասն աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողի դիմումի հիման վրա վերջինիս հետ կազմում է ժամանակացույց, որով հարկ վճարողը պարտավորվում է վճարել սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները հետևյալ կարգով.

1) մինչև 4 000 000 ՀՀ դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած 2018 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորության գումարի՝ առանց արտոնության գումարի, առնվազն մեկ տասներկուերորդ մասը: Հարկ վճարողը պարտավորվում է նաև սույն կետով սահմանված ժամանակացույցի ավարտին

չունենալ ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ.

2) 4 000 000 ՀՀ դրամ և ավելի (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն ունեցող հարկ վճարողներն ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած 2018 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորության գումարի՝ առանց արտոնության գումարի, առնվազն մեկ քսանչորսերորդ մասը: Հարկ վճարողը պարտավորվում է նաև սույն կետով սահմանված ժամանակացույցի ավարտին չունենալ ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ.

3) սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում հարկ վճարողները, կախված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորության գումարի մեծությունից, ըստ սահմանված ժամանակացույցի մարում են գումարները սկսած հաշվառման վայրի հարկային մարմին դիմելու ամսվանից մինչև սույն մասի 1-ին կամ 2-րդ կետերում սահմանված ժամկետները՝ յուրաքանչյուր ամիս հավասարաչափ վճարելով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորության գումարը՝ առանց արտոնության գումարի: Հարկ վճարողը պարտավորվում է նաև սույն կետով սահմանված ժամանակացույցի ավարտին չունենալ ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

2. Եթե հարկ վճարողի հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մասով առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը գտնվում է հարկադիր կատարման ընթացքում, ապա հարկային մարմինը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցը կնքելուց հետո դիմում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը համապատասխան կատարողական թերթը վերադարձնելու և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի համաձայն կատարողական վարույթն ավարտելու համար: Սույն մասով նախատեսված դեպքերում՝ հարկային մարմնի դիմումով ավարտված

կատարողական վարույթների վրա չի տարածվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջը:

Հոդված 6.

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված ժամանակացույցի առաջին իսկ խախտման դեպքում հարկային մարմինը պարտավորությունների բռնագանձման հայց է ներկայացնում դատարան, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում՝ տասնօրյա ժամկետում կատարողական թերթը ներկայացնում է կատարման:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված ժամանակացույցի գործողության ընթացքում հարկ վճարողների կողմից հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող ճշտված հաշվարկ-հաշվետվություններ ներկայացվելու դեպքում, հարկային մարմնի կողմից հարկ վճարողների մոտ տասնօրյա ժամկետում իրականացվում են ուսումնասիրություններ:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված ժամանակացույցի գործողության ընթացքում հարկ վճարողների կողմից ժամանակացույցում չընդգրկված ժամանակահատվածների համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով ժամկետանց պարտավորություններ ունենալու դեպքում հարկային մարմինը կարող է կիրառել օրենքով սահմանված՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների հարկադիր կատարման այլ միջոցներ:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն ունեցող այն հարկ վճարողները, որոնց նկատմամբ ներկայացվել են բռնագանձման հայցեր, կարող են հարկային մարմնի հետ կնքել հաշտության համաձայնություն:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
«Հարկային և այլ պարտադիր վճարների
գծով արտոնություններ սահմանելու մասին»
Արցախի Հանրապետության օրենքի

Ց Ա Ն Կ

2010 թվականի դեկտեմբերի 31-ից հետո փաստացի գործունեություն չիրականացրած, հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ ունեցող հարկ վճարողների

Հ/հ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը), կազմակերպաիրավական տեսակը	Հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ (հազար դրամներով)
1	90020527	«Էլվարա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	243,218.7
2	90017558	«Բելկար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	96,317.0
3	90020354	«Ռոյալ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	50,413.5
4	90012727	«Արտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	35,007.3
5	90027148	«Թելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	26,374.2
6	90010884	«Էլիտա 1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	20,377.8
7	90003365	«Շինանյութ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	18,438.7
8	90022823	«Սի ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	16,334.4
9	90026206	«Լին-Լի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	16,153.7
10	90020913	«Կենցաղի տուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	15,679.3
11	90016358	«Դելտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	14,016.8
12	90014208	«Տիտան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	13,788.7
13	90023051	«Դադիվանք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	12,613.8
14	90015605	«Շեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	11,059.4
15	90002655	«Սարգսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	10,330.7
16	90018715	«Արին Բերդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	10,113.5
17	90022067	«Ֆորվարդ» սահմանափակ պատասխանատվությամբ	9,216.8

		ընկերություն	
18	90072886	«Ենգիբարյան» փակ բաժնետիրական ընկերություն	8,671.8
19	90029548	«Կինոթատրոն Ռոսիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	7,850.2
20	90024536	«Հակոբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	7,520.0
21	90014781	«Թ-77» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	6,440.3
22	90020671	«Պապատատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	5,582.7
23	90016691	«Պրոմստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	5,470.2
24	90422435	Անհատ ձեռնարկատեր Մնացականյան Ժիրայր Շամիրի	4,820.3
25		Քալանթարյան Սերգեյ	4,314.7
26	90024829	«Նաջարյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	4,078.2
27	08804232	Ա. Կարապետյանի «Արծիվ» անհատական ձեռնարկություն	3,781.1
28	90026771	«Արթ բիզնես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,757.2
29	90421166	Անհատ ձեռնարկատեր Կիրոյան Գոհար Էդուարդի	3,671.2
30	90024304	«Վահրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,625.5
31	90027707	«Կամուրջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,546.6
32	10002368	«Արճեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,536.0
33	90340603	«Միեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,527.9
34	90027646	«Դա-Տի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,446.6
35	90026497	«Գրիշա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3,235.3
36	90429064	Անհատ ձեռնարկատեր Ավետիսյան Էդուարդ Վլադիմիրի	3,202.0
37	90022919	«Էլ մետ շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	2,667.6
38	90021615	«Օկնա ի դվերի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	2,345.6
39	90016992	«Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	2,085.0
40	90423489	Անհատ ձեռնարկատեր Դոլուխանյան Ռոմիկ Վլադիմիրի	2,035.4
41	91086191	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Հովիկ Ռադիկի	1,673.3
42	90025787	«Ֆավորիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,607.1
43	90417066	Անհատ ձեռնարկատեր Սողոմոնյան Ռուզաննա Վալերիկի	1,589.3
44	90213625	«ԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,578.2
45	90028657	«Վրեժ Մանգասարյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,562.2
46	90422821	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Աշոտ Լեոնիդի	1,553.1
47	90017454	««Հուստինիա» Իրավաբանական ընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն	1,530.5

48	10001839	«Փեփրոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,362.5
49	90019108	«ԱՍՍԱ» արտադրական կոոպերատիվ	1,338.2
50	90020887	«Օկտավա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,318.8
51	90340087	‹‹Տեղական խոհանոց›› սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,288.0
52	90210747	«Դադամյան և որդիներ» արտադրական կոոպերատիվ	1,203.4
53	90428407	Անհատ ձեռնարկատեր Բաբայան Էրիկ Արտուրի	1,197.1
54	90014696	«Էլիտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,117.4
55	90411602	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Արմեն Մուրադի	1,088.1
56	90027585	«Վիվա-Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1,057.8
57	90408428	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Արմեն Էդուարդի	990.8
58	90016933	Ամերիկայի «Արմենիան թեքնոլոջի գրուփ» առանձնացված ստորաբաժանում	976.4
59	90422211	Անհատ ձեռնարկատեր Աղալյան Արամ Անդրանիկի	956.9
60	90408204	Անհատ ձեռնարկատեր Վանյան Յուրի Բաբկենի	925.8
61	90432875	Անհատ ձեռնարկատեր Գալստյան Ռոմելա Ալեքսանդրի	809.4
62	90431667	Անհատ ձեռնարկատերԳրիգորյան Սամվել Հակոբի	781.9
63	90409884	Անհատ ձեռնարկատեր Պողոսյան Վալերիկ Արտիկի	739.9
64	90433113	Անհատ ձեռնարկատեր Միքայելյան Արթուր Ռոմանի	736.3
65	90423249	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Էրիկ Ռուդոլֆի	711.6
66	90029444	«Առաքելյան եղբայրներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	693.3
67	90024312	«Հայր և որդի Պետրոսյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	683.3
68	92101527	Անհատ ձեռնարկատեր Առստամյան Կարեն Էդուարդի	683.3
69	90745664	Անհատ ձեռնարկատեր Հայրապետյան Սուրիկ Սադրխի	668.5
70	80000554	Անհատ ձեռնարկատեր Հասրաթյան Սեյրան Առաքելի	659.8
71	90746779	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Միհեր Ռաֆայելի	650.9
72	91087985	Անհատ ձեռնարկատեր Բաղայյան Արտուր Արայիկի	648.5
73	90028838	«Արմ պրոգրես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	589.8
74	90024853	«Արդի տեխնոլոգիաներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	562.2
75	92101407	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Արայիկ Համլետի	533.5
76	90026377	«Գանչա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	515.2
77	90434012	Անհատ ձեռնարկատեր Բաբայան Ռիտա Միքայելի	511.7
78	90423411	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Վիգեն Վարուժի	473.4
79	90029521	«Ինթըրնեյշնլ դիվելըփմենթ ընդ քոնսթրաքշըն» փակ բաժնետիրական ընկերության Արցախի մասնաճյուղ	452.7
80	90425201	Անհատ ձեռնարկատեր Իսրայելյան Աշոտ Վալերիի	442.3
81	90434191	Անհատ ձեռնարկատեր Միքայելյան Վարսիկ Լևոնի	428.5
82	90434039	Անհատ ձեռնարկատեր Շախունց Արամ Մելորդի	427.5
83	90213212	«Արամ-Անի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	425.9
84	90213753	«Վեհ-Արմ-Զար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	421.9
85	90015312	«Արաքս» սահմանափակ պատասխանատվությամբ	411.0

		ընկերություն	
86	90429237	Անհատ ձեռնարկատեր Կարապետյան Առնոդի Գուրգենի	410.3
87	90433662	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Վիկտորյա Հովսեփի	402.3
88	91423685	Անհատ ձեռնարկատեր Դադալյան Արթուր Հրանտի	377.6
89	90426119	Անհատ ձեռնարկատեր Պողոսյան Արմեն Ալեքսեյի	370.2
90	90142557	«Էդուարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	349.7
91	91086236	Անհատ ձեռնարկատեր Մելժումյան Կարեն Էդուարդի	349.6
92	90436809	Անհատ ձեռնարկատեր Ալլահվերդյան Կարեն Վովայի	348.0
93	90746795	Անհատ ձեռնարկատեր Աղաջանյան Սամվել Յուրիկի	333.4
94	90427207	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Արմեն Սամվելի	316.1
95		Գալստյան Վարազդատ	315.4
96	90422968	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Էդլենա Ռուդիկի	306.7
97	90748276	Անհատ ձեռնարկատեր Բաղրյան Ալիք Համլետի	293.6
98	90013101	«Վեկտոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	287.0
99	90025805	«Արման Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	268.0
100	90423129	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Արամ Ալեքսեյի	266.6
101	90747531	Անհատ ձեռնարկատեր Սողոյան Սեյրան Խանաևի	263.8
102	90026627	«Պեգաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	258.0
103	90027284	«Վաճառ շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	244.1
104	90027654	«Նախագիծ-շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	223.1
105	91427582	Անհատ ձեռնարկատեր Սևումյան Վիլեն Հենրիխի	220.3
106	90023216	«Մարիամ կոլա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	212.0
107	90429442	Անհատ ձեռնարկատեր Գասպարյան Դավիթ Սամվելի	204.2
108	90433827	Անհատ ձեռնարկատեր Բաբայան Արևիկ Սամվելի	203.5
109	90023722	«Ալեքսանդր Գոլդ» փակ բաժնետիրական ընկերություն	201.9
110	90018542	Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի մասնաճյուղ	201.3
111	90434803	Անհատ ձեռնարկատեր Սահակյան Էրիկ Կամսարի	175.7
112	90436636	Անհատ ձեռնարկատեր Ջալավյան Բորիս Աշոտի	174.8
113	80001429	Անհատ ձեռնարկատեր Սաֆարյան Նարինե Հայկի	169.8
114	90010713	«Կանանցից հեռու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	158.2
115	91429167	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Արարատ Բահատուրի	153.5
116	90428759	Անհատ ձեռնարկատեր Թադևոսյան Աշոտ Համբարձումի	144.6
117	90434063	Անհատ ձեռնարկատեր Չալյան Արաքսյա Յուրիի	142.0
118	90427748	Անհատ ձեռնարկատեր Գալստյան Վարյա Աշոտի	135.1
119		Պետրոսյան Գեղամ	130.0
120	90430741	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Գոհար Համլետի	126.5
121	90426668	Անհատ ձեռնարկատեր Առստամյան Ռոբերտ Վլադիմիրի	124.2
122	90022669	«Միջևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	118.4
123	90426548	Անհատ ձեռնարկատեր Ստեփանյան Սամվել Համլետի	118.4
124	90436146	Անհատ ձեռնարկատեր Հակոբյան Ֆելիքս Սերյոժայի	116.8
125	90024235	«Քլոթ մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	114.7

126	90419791	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Հակոբ Ալեքսանդրի	110.8
127	90434313	Անհատ ձեռնարկատեր Ջաբիյան Արմեն Վալերիի	97.6
128	90438804	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Վաչիկ Հրաչի	96.0
129	90432153	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Էլզա Հրաչիկի	95.7
130	90430699	Անհատ ձեռնարկատեր Համբարձումյան Վրեժ վահանի	95.1
131	90431608	Անհատ ձեռնարկատեր Մարտիրոսյան Գոհար Բորիկի	94.0
132	91764751	Անհատ ձեռնարկատեր Խաչատուրյան Սուսաննա Ռոբերտի	93.8
133	90016211	«Նոր սերունդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	93.3
134	91429116	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Արմեն Ակսելի	92.1
135	90407236	Անհատ ձեռնարկատեր Բալայան Սյուզաննա Համլետի	90.3
136	90428527	Անհատ ձեռնարկատեր Գասպարյան Մարատ Օլեգի	88.9
137	91089362	Անհատ ձեռնարկատեր Բեկնազարյան Արման Սերգեյի	88.9
138	90428895	Անհատ ձեռնարկատեր Կարապետյան Հայկ Վլադիմիրի	87.3
139	91087324	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Ռուզաննա Սահակի	83.3
140	90434409	Անհատ ձեռնարկատեր Զաքարյան Արմեն Գեորգիի	82.7
141	90010902	«Ասպար ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	81.9
142	90434228	Անհատ ձեռնարկատեր Զաքարյան Նունե Բարմենի	73.1
143		Պետրոսյան Էրիկ	73.0
144	90437431	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Հովիկ Համլետի	67.8
145	90435143	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Արթուր Հրանտի	67.0
146	90140594	«Հայրապետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	64.7
147	90420208	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Ժիրայր Յուրիի	61.2
148	91087204	Անհատ ձեռնարկատեր Հայրիյան Նելյա Մկրտիչի	59.2
149	90019433	«Սենյորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	58.5
150	91087796	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Արթուր Ռոբերտի	58.0
151	92101724	Անհատ ձեռնարկատեր Պողոսյան Լուսինե Ժորիկի	57.0
152	90073846	«Ալվարդ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	56.8
153	90437269	Անհատ ձեռնարկատեր Աբրահամյան Սամվել Ռոբերտի	55.6
154	90434718	Անհատ ձեռնարկատեր Առստամյան Սաթիկ Գալուստի	55.0
155	80002706	Անհատ ձեռնարկատեր Թևանյան Սվետլանա Սուրիկի	54.4
156	90436463	Անհատ ձեռնարկատեր Լալայան Բելա Լարետի	53.6
157	91084979	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Գագիկ Ռոմայի	53.4
158	90424481	Անհատ ձեռնարկատեր Բարխուդարյան Արմեն Ռոմայի	52.8
159	90424894	Անհատ ձեռնարկատեր Դավթյան Արայիկ Յաշայի	50.1
160		Ասատրյան Վարդան	46.0
161	90435985	Անհատ ձեռնարկատեր Զախարյան Նանար Հենրիկի	43.7
162	90428346	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Սեդրակ Միքայելի	42.8
163	10001021	«Կապի հանգույց» բյուջետային ձեռնարկություն	41.0
164	90425295	Անհատ ձեռնարկատեր Թավադյան Արարատ Վալերիի	40.8
165	90748971	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Սուսաննա Ապրեսի	37.4
166	90427439	Անհատ ձեռնարկատեր Լալայան Դավիթ Մանվելի	35.5
167	90428389	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Ալեքսեյ Շահենի	34.5
168	90432438	Անհատ ձեռնարկատեր Սողոմոնյան Լյուդմիլա Գրիգորիի	33.4
169	91430346	Անհատ ձեռնարկատեր Պետրոսյան Ալինա Ալեքսեյի	32.9
170	90013032	«Դիանիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	32.0

171	90019279	«Ստելա-Կ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	31.9
172	90431848	Անհատ ձեռնարկատեր Բաբայան Ռայա Արարատի	30.8
173	90431563	Անհատ ձեռնարկատեր Միրզոյան Ռիտա Կիմայի	28.8
174	90436705	Անհատ ձեռնարկատեր Միրզոյան Սուսաննա Ալբերտի	26.3
175	90006699	«Ասրիյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	24.5
176	90011285	«Աղբյուր» փակ բաժնետիրական ընկերություն	24.1
177	90436455	Անհատ ձեռնարկատեր Բաղդասարյան Վրեժ Ադամի	23.2
178	90431049	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Հարություն Անատոլիի	22.9
179	90429719	Անհատ ձեռնարկատեր Աբրահամյան Արտիկ Նիկոլայի	22.1
180	90435617	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Ինեսսա Վոլդեմարի	22.1
181	91428894	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Արամ Ռոմիկի	20.8
182	90408684	Անհատ ձեռնարկատեր Ավագյան Վազգեն Բեյբուդի	20.8
183	90016805	«4*4» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	20.5
184	90747824	Անհատ ձեռնարկատեր Ալլահվերդյան Անահիտ Գրիգորիի	20.3
185	90748164	Անհատ ձեռնարկատեր Գալստյան Նունե Ժուկովի	19.8
186	90017145	«Իոսիֆ և որդիներ» փակ բաժնետիրական ընկերություն	19.4
187	90024906	«Մակրոգեյմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	17.5
188	90002887	«Ապրես» արտադրական կոոպերատիվ	16.9
189	90426495	Անհատ ձեռնարկատեր Աբաղյան Արայիկ Սպարտակի	16.7
190		Ալեքսանյան Վարդան	16.0
191	90430432	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Գոհար Հրանտի	15.7
192		Դանիելյան Ռաջ	15.0
193	90017523	«AG» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	14.7
194	90437708	Անհատ ձեռնարկատեր Ծատրյան Օքսաննա Արամաիսի	13.4
195	90431073	Անհատ ձեռնարկատեր Զաքարյան Անդրանիկ Մավրիկի	13.2
196	90429493	Անհատ ձեռնարկատեր Մանգասարյան Գենադի Իսայի	13.1
197	90435753	Անհատ ձեռնարկատեր Պետրոսյան Պյոտր Արկադիի	13.1
198	90440547	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Արթուր Արամայիսի	12.6
199	90028769	«Դիքսի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	12.1
200	90001069	«Անդրանիկ» արտադրական կոոպերատիվ	10.8
201	90401807	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Աշոտ Վանիի	10.1
202	90439522	Անհատ ձեռնարկատեր Ավետիսյան Հովիկ Յուրիի	10.0
203	80003107	Անհատ ձեռնարկատեր Մելքոնյան Դավիթ Սուրենի	9.9
204	90433611	Անհատ ձեռնարկատեր Հայրապետյան Սամվել Ալեքսանդրի	9.6
205	90410565	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Կարեն Համլետի	9.1
206		Ավագյան Էռնիկ Վլադիմիրի	9.0
207	90433481	Անհատ ձեռնարկատեր Հակոբյան Ամալյա Սուրենի	8.3
208	90439179	Անհատ ձեռնարկատեր Միլոնյան Արթուր Վաչագանի	8.1
209	90433638	Անհատ ձեռնարկատեր Գաբրիելյան Նաիրա Նիկոլաի	7.8
210	90439866	Անհատ ձեռնարկատեր Բաղրյան Դավիթ Կամոյի	7.8
211	90435204	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Կարինե Վիտալիի	7.5
212	90431659	Անհատ ձեռնարկատեր Գասպարյան Արամայիս Սուրենի	6.4
213	90433774	Անհատ ձեռնարկատեր Հայրապետյան Զարիֆա	6.4

		Նիկոլայի	
214	90438306	Անհատ ձեռնարկատեր Ամիրջանյան Զոյա Ալեքսանդրի	5.9
215	90429314	Անհատ ձեռնարկատեր Գալստյան Կարինե Գալուստի	5.2
216	90431185	Անհատ ձեռնարկատեր Առստամյան Լուսինե Հենրիխի	5.1
217	90024174	«Ասկլեպիուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	5.0
218	90432704	Անհատ ձեռնարկատեր Ներսիսյան Կարինե Բորիկի	5.0
219	90434958	Անհատ ձեռնարկատեր Առուշանյան Արմեն Գրիգորիի	5.0
220	90009044	«Պրիզմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	4.9
221	90434004	Անհատ ձեռնարկատեր Լալայան Կարեն Արտոի	4.6
222	90422872	Անհատ ձեռնարկատեր Վարդանյան Ժասմեն Իսայի	4.5
223	90437828	Անհատ ձեռնարկատեր Դաղայան Ծովինար Նիկոլայի	3.5
224	90432747	Անհատ ձեռնարկատեր Հովհաննեսյան Աշոտ Սուրենի	3.4
225	90434657	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Անդրեյ Արմենի	3.3
226	90432411	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Էլլադա Էդուարդի	3.2
227	90426186	Անհատ ձեռնարկատեր Ադամյան Մարգուշա Մանթաշի	3.1
228	90431331	Անհատ ձեռնարկատեր Հակոբյան Միհրան Արկադիի	3.1
229	90429306	Անհատ ձեռնարկատեր Մելքումյան Գայանե Միերի	3.0
230	90028098	«Հարությունյան եղբայրներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	2.9
231	90428415	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Մերի Լյուդվիկի	2.7
232	90426308	Անհատ ձեռնարկատեր Իշխանյան Արմիդա Ալեքսանդրի	2.7
233	90433707	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Ծովինար Կարապետի	2.7
234	90432995	Անհատ ձեռնարկատեր Հայրիյան Արզիկ Վաչագանի	2.6
235	90437913	Անհատ ձեռնարկատեր Կարապետյան Մարատ Մանվելի	2.5
236	90020407	«Մայքրոքաթ դայմոնդս» փակ բաժնետիրական ընկերություն	2.3
237	90006158	«Մարկոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	2.1
238	90431435	Անհատ ձեռնարկատեր Անտոնյան Սուսաննա Վարոնի	1.9
239	80000658	Անհատ ձեռնարկատեր Տեր-Մինասյան Աստղիկ Սիմոնի	1.9
240	90423643	Անհատ ձեռնարկատեր Մկրտչյան Սաթիկ Սերգեյի	1.8
241	91421303	Անհատ ձեռնարկատեր Այդինյան Վալերի Սարգիսի	1.8
242	90408625	Անհատ ձեռնարկատեր Պողոսյան Արմեն Էդիկի	1.7
243	90417599	Անհատ ձեռնարկատեր Հայրապետյան Արայիկ Դրաստամատի	1.6
244	90405619	Անհատ ձեռնարկատեր Հուռումյան Ռուդոլֆ Սերգեյի	1.5
245	90431211	Անհատ ձեռնարկատեր Սահակյան Սերգեյ Ռուդոլֆի	1.5
246	90426934	Անհատ ձեռնարկատեր Բաբայան Նինա Ահարոնի	1.3
247	90438589	Անհատ ձեռնարկատեր Իշխանյան Հովիկ Սուրենի	1.3
248	90425545	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Սուսաննա Իվանի	1.2
249	90030013	«Դավթյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1.1
250	90431323	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Ստելլա Իվանի	1.1
251	90404608	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Վագիֆ Վաղարշակի	0.8
252	90026273	«Վանեսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	0.8
253	90430922	Անհատ ձեռնարկատեր Դանիելյան Աշոտ Լևոնի	0.7
254	90408479	Անհատ ձեռնարկատեր Ավանեսյան Լիդա Գուրգենի	0.5
255	90427961	Անհատ ձեռնարկատեր Խաչատրյան Բորիս Բահատուրի	0.5

256	90426814	Անհատ ձեռնարկատեր Բալայան Սերգեյ Ռաշիդի	0.5
257	90427567	Անհատ ձեռնարկատեր Ծատրյան Սուրեն Վալերիի	0.5
258	90439874	Անհատ ձեռնարկատեր Տեր-Սահակովա Արաքսյա Բորիսի	0.5
259	90015054	«Թամարա» փակ բաժնետիրական ընկերություն	0.4
260	90027337	«Ապառաժ երիտասարդական միություն» հասարակական կազմակերպություն	0.4
261	90422608	Անհատ ձեռնարկատեր Բաղդասարյան Իննա Վալերիի	0.4
262	90440289	Անհատ ձեռնարկատեր Դավթյան Արմենուհի Համլետի	0.4
263	90342316	«Ռենեսանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	0.4
264	90015664	««Ավանդույթ» հասարակա-մշակույթային կենտրոն» հասարակական կազմակերպություն	0.3
265	90024416	«Արցախի կանայք» հասարակական կազմակերպություն	0.3
266	90027422	«ԻԷԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	0.3
267	90020285	«Ավե Մարիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	0.3
268	90421355	Անհատ ձեռնարկատեր Բաղրյան Աիդա Գրիգորի	0.3
269	90422512	Անհատ ձեռնարկատեր Սևոյան Համլետ Էդուարդի	0.3
270	90430278	Անհատ ձեռնարկատեր Հարությունյան Արթուր Վլադիմիրի	0.3
271	90433886	Անհատ ձեռնարկատեր Մնացականյան Ինգա Սիմոնի	0.3
272	90435058	Անհատ ձեռնարկատեր Գևորգյան Կարեն Արկադիի	0.3
273	90437852	Անհատ ձեռնարկատեր Հակոբյան Աշոտ Ռոբերտի	0.3
274	91429228	Անհատ ձեռնարկատեր Աղաբեկյան Սենորիկ Սերգեյի	0.3
275	90024424	«Ալֆա և օմեգա» հասարակական կազմակերպություն	0.2
276	90015347	«Մարատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	0.2
277	90422563	Անհատ ձեռնարկատեր Մարտիրոսյան Ռուլետա Արշակի	0.2
278	90429674	Անհատ ձեռնարկատեր Ղահրամանյան Կարինե Ավետիկի	0.2
279	90431238	Անհատ ձեռնարկատեր Իսրայելյան Անահիդա Սուրենի	0.2
280	90436189	Անհատ ձեռնարկատեր Ղևոնդյան Արթուր Ռազմիկի	0.2
281	90436721	Անհատ ձեռնարկատեր Գրիգորյան Նորայր Արարատի	0.2
282	90437114	Անհատ ձեռնարկատեր Մինասյան Կարեն Վլադիմիրի	0.2
283	90437647	Անհատ ձեռնարկատեր Սարգսյան Էրիկ Միքայելի	0.2
284	90438493	Անհատ ձեռնարկատեր Ենգիբարյան Կարինե Գեորգիի	0.2
Ընդամենը			**772,344.4**